

# ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Ե. 1868 ՍԵՊՏԵՄԲԵՐ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի լուր ընդհանրութեան ազգին մերոյ կ՚յայտնեմք մեր անկեղծ շնորհակալութիւնը բոլոր ուսումնասէր բաժանորդաց Արարատ ամսագրիս, որոց թիւը ըստ մեզ ոչ թէ յիշեալ Ամսագրի նիւթոց արժանաւորութեան կամ վայելչութեանը համար, այլ 'ի պատիւ սրբոյ Հայրապետական Աթոռոյս Էջմիածնի և նորին Վեհափառ գահակալի հնգամնեայ սուղ միջոցում, միմիայն Ռուսաստանի մեր սիրելի ազգայնոց մէջ՝ թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց հասած է մինչև ցարդ հազար երկու հարիւր անձանց, մինչ դեռ սակաւ էին Տաճկաստանի մանաւանդ Կոստանդնուպոլսոյ հայրենասէր և ազգասէր հասարակութեան բաժանորդաց թիւը հասած չէ՝ մեզ, որոց բաժանորդագրութեան մասնակից լինելու համար արդէն Մասիս պատուական շաբաթագիրը Սրբազան պատրիարգի կարգադրութեանը համաձայն հրատարակել էր իւր յուլիս ամսոյ թերթերով։

Հաւատալի ենք, որ ազգիս յառաջադէմ զարգացեալ հասարակութիւնը սի-

պայծառ կամօք բաժանորդ գրուելով Արարատայ` կ'քաջալերէ զմիաբանութիւնս, որպէս զի 'ի փառս համազգական Աթոռոյս և ի պարծանս նոյն իսկ ազգին` ամէնքս եւս միօրինակ ջանիւք գործակից լինիմք նորընծայ ամսագրիս յարատեւ շարունակութեանը և կենցաղօգուտ գիտելեաց յօդուածոց հեղեղեալ տպագրութեանց, որով Արարատ ամսագիրը իւր անուանը համեմատ արարատեան մեծակայ և հեռաւոր զաւակաց կարող լինի աւելի ախորժելի և օգտաւէտ ընել իւր թերթերը.

Ուստի` մեր ազնուամիտ բաժանորդաց ներողամտութիւնը կ'խնդրեմք թէ մինչև հիմայ տպագրութեան տառից անվայելչութեան համար, թէ ոմանց ամսաթերթիս անկանոնաբար ուշ հասնելուն. վասն զի այս պակասութիւնը ոչ թէ խըմբագրատան կողմանէ անհոգութեամբ յառաջացած էր, այլ թղթատանց արգելքները և քանի մի քաղաքաց բաժանորդաց անուանական ցուցակաց ուշ հասնելը մեր ձեռքը այսպիսի ակամայ յետաձգութեան պատճառ եղաւ, եւ և տպարանի քանի մի հարկաւոր պարագայից և նիւթոց պակասութիւնք ստիպեցին զմեզ յետաձգել այսպէս [illegible] ամսաթերթը. վասն զի ինչպէս յայտնի է ամենուն, Էջմիածինը հեռի լինելով Ռուսաստանի վաճառաշահ քաղաքներէն, բնականաբար ամիսներ կ'անցնին մինչև որ հարկաւոր նիւթերը մեր ձեռքը հասնելով կ'սկսին 'ի գործ դրուիլ.

Այժմ երախտագէտ սրտիւ կ'յայտնեմք ընդ սմին մեր շնորհակալութիւն 'ի դիմաց սրբոյ Աթոռոյս բարեծնունդ Ազգասէր Պ. Մկրտիչ Ս. Նազարեանցին որ նուիրեց Ս. Աթոռոյս տպարանին ինչպէս վաղուց խոստացած էր, Վեհափառ Հայրապետին յորդորանացը համեմատ` նորաձև և վայելուչ տառից մայրեր, զորս ժամանակին 'ի գործ կ'ածենք.

Նոյնպէս ազնուական Պ. Յ. Յովհաննեանցին կ'մատուցանեմք մեր խորին շնորհակալութիւնը, որ 'ի պէտս տպագրութեան Արարատայ նուիրեց հարիւր քսան տոփ ազնիւ թուղթ երեք տեսակ մեծ, միջակ և փոքր թերթք: Այս անձը ըստ իւր ջերմեռանդութեան սրտի առ սուրբ Աթոռս և ըստ ազգասիրութեանն սորանից առաջ նուիրած է Աթոռոյս տպարանին 'ի յիշատակ իւր բարեպաշտութեան և մէկ նորաձեւ տպագրական մամուլ Բրուսիաց Բերլին մայրաքաղաքը թափած.

---

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԱՑ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Առաքելական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց.

Երբ մեր այս դուղնաքեայ աշխատութեան ըստ մեծի մասին իւր լոյսը վերոյիշեալ թերթերէն քաղելէ զինի, կը փութամ ստորև մեր Ս. Եկեղեցւոյ հիմնադիր առաքելոց` աշակերտաց և նոցին յաջորդաց ոմանց` որքան որ զարդ